

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ ԴԱՇՆԱՐ ԱԼ-ԱՍՏՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ԻՐԵՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ԴԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 24 Մայիս 2022-ին, Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետն ու իրեն ընկերակցող պատուիրակուհին:



Հանդիպման ընթացքին Նախագահ Ասատ յայտնեց, որ Սուրիոյ ժողովուրդը կը յատկանշուի ներդաշնակութեամբ ու խաղաղ գոյակցութեամբ՝ հասարակութեան մասնիկներուն կրօնական եւ ցեղային տարբերութիւններով մէկտեղ: Նախագահը շեշտեց, որ ներդաշնակ գոյակցութիւն չի նշանակեր ձուլում, այլ՝ պահպանում սուրիական ընկերութեան իւրաքանչիւր բաղադրիչի ինքնութեան բոլոր տարրերուն, ինչ որ կ'ամրապնդէ տուեալ բաղադրիչներուն պատկանելիութիւնն ու հողին կառչած մնալը: Այն հողին, որուն վրայ կ'ապրին հազարաւոր տարիներէ ի վեր: Իր կարգին, ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոսն ու իրեն ընկերակցող պա-

տուիրակուհինը դիտել տուին, որ Սուրիոյ դեմ ահաբեկչական, ապա նաեւ տնտեսական պատերազմները կը միտին քայքայել երկրի ընկերութեան բազմերանգ եւ իւրայատուկ դիմագիծը, հետեւաբար գաղթի ու հայրենալքումի մղել Սուրիոյ ժողովուրդը: Վեհափառ հայրապետը շեշտեց, որ սուրիահայերը կառչած պիտի մնան Սուրիական Զայրենիքին եւ Սուրիոյ ժողովուրդի բոլոր մասնիկներուն հետ գործակցաբար իրենց ողջ ներուժը պիտի տրամադրեն պատերազմին հետեւանքները յաղթահարելու եւ երկիրը վերականգնելու նուիրական աշխատանքին:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Բերիոյ Զայրոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, Լիբանանի խորհրդարանի երեսփոխան Յակոբ Բագրատունի, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, Ազգ. Կեդր. Վարչութեան անդամ Զրաչ Յակոբեան եւ ազգայիններ՝ Վրեժ Եագուպեան, Սունպուլ Սունպուլեան եւ Սուրեն Վարդանեան:



Աւարտին, Վեհափառ հայրապետը նախագահին նուիրեց Բարձրբերդի Աւետարանի օրինակ մը եւ իր հեղինակած «The Armenian Church» գիրքի արաբերէն թարգմանութիւնը:

Յայտնենք, որ Վեհափառ հայրապետը նոյն օրը յաջորդաբար այցելեց Սուրիոյ Կրօնից Նախարար Ահմատ Ապտ ալՍաթար ալՍայետին, վարչապետ Զուսէյն Ար-Նուսին եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ պետ Աֆրամ Բ. Պատրիարքին (Յոյն Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներու պետերը երկրէն բացակայ ըլլալուն պատճառով անոնց հետ հանդիպում տեղի չունեցաւ):

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՏԵՐ ԶՕՐԵՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՆԱՀԱՍԱՆԻՐԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆԵՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս Երեքշաբթի, 24 Մայիսին Դամասկոսի մէջ Սուրիոյ Նախագահին եւ այլ պետական ու հոգեւոր պատասխանատուներու հետ ունեցած իր հանդիպումներէն ետք, Չորեքշաբթի, 25 Մայիս 2022-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, իրեն ընկերակցող շքախումբին հետ ժամանեց համահայկական ուխտավայր՝ Տեր Զօր:

Շքախումբին, Բերիոյ Զայրոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի կողքին, մաս կը կազմէին Լիբանանի խորհրդարանի երեսփոխան եւ հայկական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, ԶՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Զրաչ Յակոբեան, ազգայիններ՝ Վրեժ Եագուպեան, Սուրեն Վարդանեան եւ Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ Սունպուլ Սունպուլեան, ինչպէս նաեւ գաւազանակիր հոգշ. Տեր Սարգիս Արք. Լիպարեան եւ հոգշ. Տեր Յովակիմ վրդ. Բանճարճեան:

Շար.՝ 19 2 ➔



ՆՍՕՏՏ ԱՐԱՍ Ա. ՏԵՐ...

Սկզբը՝ էջ 1

Նորին Սրբութիւնը Տեր Զօրի օդակայանին մէջ դիմաւորուեցաւ պետական բարձրաստիճան պատասխանատուներու, «Պասա» կուսակցութեան քարտուղարին, ապահովական ուժերու ներկայացուցիչներու, ՀՀ Մարդասիրական Անաքեղութեան Սուրբոյ Ներկայացուցիչին եւ սուրիական խորհրդարանի երեսփոխաններու կողմէ, գլխաւորութեամբ՝ Տեր Զօրի նահանգապետ Ֆատել Նաճարի:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը այցելեց նահանգապետարան, ուր շերմապետ դիմաւորուեցաւ նահանգապետարանի անձնակազմին կողմէ:

Նահանգապետ Ֆատել Նաճար բարի գալուստ մաղթեց Վեհափառ Տիրոջ եւ իրեն ընկերակցող շքախումբին, լուսարձակի տակ առնելով Տեր Զօրի բնակչութեան հայ թէ արաբ բաղադրիչներու շերմաբերութիւնները: Ան դիտել տուաւ, որ Սուրբոյ դէմ պատերազմը կը միտեր քայքայել հասարակութեան ընկերային ներդաշնակ հիւսուածքը, սակայն սուրիական ընկերութեան բաղադրիչներուն գործակցութիւնը աւելի ամրապնդուեցաւ՝ ձախողութեան մատնելով դաւադիրներու ծրագիրները:

Տեր Զօրի կրօնական կալուածներու տնօրէն Ապտուլ Հասի Մուհամետ Սալեհ բարի գալուստ մաղթելով Արամ Ա. կաթողիկոսին եւ անոր շքախումբին, յայտնեց, որ հայութիւնը սերտ կապեր ունի Տեր Զօրի հետ, հետեւաբար բոլորս ձեռք ձեռքի տալով կարելիութիւն ունիք վերաշինելու Տեր Զօրի Սրբոց Նահատակաց յուշահամալիրը, Տեր Զօրը եւ ողջ Սուրիան:

Նորին Սրբութիւնը խօսք առնելով հաստատեց, որ Տեր Զօրը սովորական վայր մը չէ մեր ժողովուրդին համար, այլ՝ սրբավայր եւ ուխտավայր է: Տեր Զօրի աւագը միախառնուած է հայուն արիւնով: Ապա աւելցնելով ըսաւ. «Թէեւ Տեր Զօրը մեզի համար գերեզման դարձաւ, սակայն միեւնոյն ատեն մեր վերածնունդի վկայարանը հանդիսացաւ»:

Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ, որ ութ անգամ այցելած է Տեր Զօր, սակայն այս վերջինը այլ ազդեցութիւն թողած է իր վրայ, որովհետեւ Նոյն ցեղասպան թուրքը երկրորդ ցեղասպանութիւնը գործած է Տեր Զօրի մէջ ու քաղաքը վերածած է աներակի:



Նորին Սրբութիւնը ողջունեց Տեր Զօրի նահանգապետը, որ լրջօրէն նուիրուած է նահանգի վերականգնումի աշխատանքին: Ապա ան անդրադարձաւ Սուրբոյ վստմաշուք նախագահին հետ հանդիպման, ուր լուսարձակի տակ առնուած է սուրիահայ-

յութեան կարեւոր դերակատարութիւնը երկրի վերականգնումին մէջ:

Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց նահանգապետին եւ պետական աւագանիին՝ իրենց շերմ հիւրընկալութեան համար եւ այս առիթով իր գնահատանքը ուղղեց Տեր Զօրի գաւակ, ազգային բարերար Սուրեն Վարդանեանին:

Լիբանանի խորհրդարանի երեսփոխան եւ հայկական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի խօսք առնելով շեշտեց, որ Սուրբոյ դէմ պատերազմը օտարներու պատերազմն էր Սուրբոյ մէջ: «Մենք ականատես եղանք, թէ ինչպէ՛ս այս քաղաքը եւս պատերազմի հետեւանքով պաշարուեցաւ եւ քանդուեցաւ, իսկ ոճրագործը անպատիժ մնաց, որուն համար ալ ան կը շարունակէ ոճիրներ գործել Սուրբոյ, Պաղեստինի, Իրաքի մէջ եւ այլուր: Հետեւաբար, Սուրիան պաշտպանելը իւրաքանչիւր ազգային պարտքն է՝ յանուն Սուրբոյ ինքնիշխանութեան եւ ժողովուրդի արժանապատուութեան պահպանման»:

Աւարտին, Նորին Սրբութիւնը Կիլիկոյ կաթողիկոսութեան նուիրուած գիրք մը եւ «The Armenian Church» գիրքի արաբերէն թարգմանութիւնը նուիրեց նահանգապետին: Իր կարգին, նահանգապետը Սուրբոյ վերականգնումը խորհրդանշող յուշանուէր մը նուիրեց Վեհափառ Հայրապետին:

ՆՍՕՏՏ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՊԻՏԻ ՎԵՐԱՇԻՆԵՔ ՏԵՐ ԶՕՐԻ ԵՎԵՂԵՅԻՆ ԻՐ ՀԱՍՄԱԽՐՈՎ: ՏԵՐ ԶՕՐԻ ՀԱՍՄԱԽՐԸ ՎԵՐԱՇԻՆԵՔ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՆՈՐ ՇՈՒՆՉ, ՆՈՐ ԹԱՓ ՏԱԼ ՄԵՐ ՊԱՀԱՆՉԱՏԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ»

ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոս Զորեքչաքթի, 25 Մայիս 2022-ին, այցելեց Տեր Զօրի Սրբոց Նահատակաց քանդուած յուշահամալիր, ուր դիմաւորուեցաւ ՀՄԸՄ-ի փողերախումբին եւ սկաւտներուն, թեմի միաբան հայրերուն եւ քահանայից դասուն, Հայէպէն, Դամասկոսէն, Գամիշլիէն, Լաթաքիայէն եւ Քեսապէն ժամանած հայկական միութիւններու եւ ազգային մարմիններու մեծաթիւ ներկայացուցիչներու, Սուրբոյ ապահովական ուժերու, Սուրիական Կարմիր Մահիկ կազմակերպութեան, Նահատակներու ընտանիքներու օժանդակութեան յանձնախումբի անդամներու եւ տեղական լրատուամիջոցներու կողմէ:

Ի գործ դրուեցան արաբական հիւրընկալութեան յիշարժան աւանդոյթներ, որոնցմէ ետք Վեհափառ Հայրապետն ու իրեն ընկերակցող շքախումբը «Հրաշափառ» եւ «Ուրախ Լեր» շարականներու երգեցողութեամբ



ուղղուեցան դէպի Սրբոց Նահատակաց Յուշահամալիրի դահլիճ:

Վեհափառ Հայրապետը Տեր Զօրէն հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական շերմ սիրով ողջունեց հայ ժողովուրդի աշխարհացրիւ գաւակները ու ըսաւ, որ Տեր Զօրը մեր ազգի գաւակներուն համար սովորական վայր մը չէ, այլ կենդանի վկայարանն է Հայոց Յեղասպանութեան: Ան ոչ միայն մեր ժողովուրդի



գերեզմանը, այլեւ յարութեան վկայարանը դարձաւ ու Յեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդի գաւակները հաստատուելով Սուրիա, Լիբանան եւ այլուր, Տեր Զօրը իրենց հետ տարին որպէս ոգի, մանաւանդ որպէս պատգամ երկրագունդի մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու ձեռքբերման: Ահա թէ ինչո՛ւ Տեր Զօրը մեզի համար ուխտավայր է, սրբավայր է:



Նորին Սրբութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրբոյ ժողովուրդին եւ պետութեան, որոնք մեր ժողովուրդի գաւակներուն առջեւ բացին իրենց դռները, հայրենիքը եւ իրենց հացն ու ջուրը բաժնեկցեցան Յեղասպանութենէն վերապրողներուն հետ: Ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն ազգերուն, պետութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՊԻՏԻ...

Մկիզբ՝ էջ 2

յանդգնություն ունեցան ճանջալու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանությունը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը յայտարարեց.

«Այսօր, այս ատերակներուն դիմաց կանգնած կը յայտարարեմ աշխարհացոյի մեր ժողովուրդի զաւակներուն եւ համայն մարդկութեան, թէ՛ մենք պիտի վերաշինենք Տէր Զօրի յուշահամալիրը: Մենք կեանքի ժողովուրդ ենք,



տեսլական ունեցող ժողովուրդ ենք: Մենք կը մերժենք մահը, քանդումը, թըշնամությունը, ատելությունը, ունիք կեցուածք այն բոլորին դիմաց, որոնք կը փորձեն մահ, քանդում, ատերակ ցանել ամեն տեղ: Մեր ժողովուրդը լոյսի ու յոյսի, հաւատքի ու վճռականութեան ժողովուրդ է: Եկած եմ անգամ վը եւս շեշտելու, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, սակայն համազգային մասշտապով, մեր ազգի բոլոր զաւակներուն մասնակցութեամբ եւ սուրիական պետութեան ու ժողովուրդին զօրակցութեամբ, մենք պիտի վերաշինենք Տէր Զօրի եկեղեցին իր համալիրով:

«Տէր Զօրի այս համալիրը վերաշինել կը նշանակէ

Նոր շունչ, Նոր թափ տալ մեր պահանջատիրական պայքարին: Մեր ժողովուրդը պահանջատեր է: Մեր մարդկային իրաւունքները տակաւին կը մնան բռնաբարուած: Մենք պիտի շարունակենք մեր պայքարը Տէր Զօրի, Սու-



րիոյ, Լիբանանի մէջ եւ այլուր: Այսպէս պետք է ըլլայ իրաւագրկուած ժողովուրդին կեանքը: Մեր կեանքը պայքարի, պահանջատիրութեան կեանք է: Հետեւաբար այսօր, այստեղ՝ Տէր Զօրի մէջ, մենք կը վերանորոգենք մեր հաւատքն ու կամքը՝ շարունակելու մեր պահանջատիրական պայքարը»:

Ապա Տէր Զօրի նահանգապետ Ֆատել Նաճճար խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան համար, որ համարեց հայութեան զօրակցութիւնը Տէր Զօրի, ապա նաեւ ողջ Սուրիոյ վերականգնումի աշ-

խատանքներուն: Ուստի ան շեշտեց, որ ձեռք ձեռքի տալով միասնաբար պիտի վերակառուցենք Սուրիան ու դէմ պիտի դնենք Սուրիոյ ընկերային համերաշխ հիւսուածքի քայքայման ուղղուած բոլոր դաւադրութիւններուն:



Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ Սունայուլ Սունայուլեան ողջունեց Տէր Զօրի աշիրեթները, որոնք Ցեղասպանութեան օրերուն տիրութիւն ըրին հայ ժողովուրդին, ապա ներկայացնելով յուշահամալիրին կառուցման նպատակը, անդրադարձաւ թրքական ուժերու կողմէ անոր քանդումին, շեշտելով, որ յիշողութիւնը կարելի չէ ջնջել: Իր խօսքը եզրափակելով ան ողջոյնի խօսք ուղղեց Սուրիոյ նախագահին եւ սուրիական բանակին:

Տէր Զօրի կրօնական կայուածներու տնօրէն Ապտուլ Հատի Մուհամետ Սարեի խօսք առնելով յայտնեց, որ ՆՍՕՏՏ Արամ Ա.ին եւ հայութեան հետ Սուրիոյ ժողովուրդը բարեկամական յարաբերութիւններ կը վայելէ, որովհետեւ անոնք հաւատարիմ բարեկամներ են: Ապա շեշտեց, որ հայ ժողովուրդը Ցեղասպանութեան ենթարկող Նոյն ձեռքերը քանդեցին Սուրիան, անոր եկեղեցիներն ու մզկիթները, հետեւաբար երկու ժողովուրդները Նոյն խորամտին մէջ կը պայքարին:



Պաշտօնական խօսքերու աւարտին դպրաց դատուն եւ միաբան հայրերուն երգեցողութեամբ հնչեցին



«Ամեն Հայի» եւ «Ի Վեր Բարձանց Ս. Սիոնի» հայրապետական մադթերգները: Ապա Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»-ով փակեց ժողովուրդային հաւաքը, որմէ ետք ներկայները միասնաբար «Կիլիկիա» մադթերգը երգեցին:



Հուսկ Վեհափառ



Հայրապետը ժողովուրդին ցաւակցութիւնները ընդունեց եւ երիտասարդութեան հետ մտերմիկ գրոյց մը ունեցաւ: Յիշենք, որ Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբը իրաւիւրեալներուն բաշխեց «Արդարացի Լուծում» գիրքին արաբերէնի թարգմանուած օրինակը, իսկ Վեհափառ Հայրապետի այցելութիւնը «Ռատիօ Երագ»-ի ուղիղ սփռումով հեռարձակուեցաւ:

ՈՂՋՈ՛ՅՆ ՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏԵՐ ԶՕՐԻ ՈՒԽՏԱՎԱՅՐԷՆ

Տեր Զօրի համազգային ուխտավայրէն, Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով կ'ողջունեն մեր ժողովուրդի սիրելի գաւաակները:

Տեր Զօր... կա՞յ իր երակներուն մէջ հայրու արին ունեցող հայ մը աշխարհի տարածքին, որ չի գիտեր թէ Տեր Զօրը վայր ըլլալէ անդին՝ հոմակիչ է Հայոց Տեղասպանութեան: Արդարեւ, կարելի չէ ամբողջական ճանաչումը ունենալ հայոց ժամանակակից պատմութեան եւ յատկապէս Տեղասպանութեան, առանց Տեր Զօրին, որ դարձաւ հազարաւոր հայերու մահուան կարաւանին վերջին կայանը:



Երկրորդ անգամ ցեղասպանութեան ենթարկուած Տեր Զօր եկած եմ տերգօրացեալ, սակայն յարութիւն առած մեր ժողովուրդի գաւաակներուն հաւատարմութիւնը վերանորոգելու մեր Նահատակներու յաւերժախօս պատգամին ու արդար դատին:

Տեր Զօր եկած եմ մեր ժողովուրդին երախտագիտութիւնը յայտնելու Սուրբոյ ազկիւ ժողովուրդին ու պետութեան, որոնք իրենց հայրենիքին մէջ ընդունեցին ցեղասպանի արիւնոտ սուրեն ճողոպրած մեր ժողովուրդի գաւաակները՝ իրենց հայրենիքը, հացն ու ջուրը կիսելով անոնց հետ եւ իրենց զօրակցութիւնը յայտնելով մեր ժողովուրդի պայքարին:

Տեր Զօր եկած եմ մեր բարձր գնահատանքը յայտնելու բոլոր այն պետութիւններուն, կառավարութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք պաշտօնապէս ճանչցան Հայոց Տեղասպանութիւնը՝ կանգնելով հայ ժողովուրդի արդար դատի կողքին:

Տեր Զօր եկած եմ աշխարհին ըսելու, որ կարելի է Տեր Զօրի Նահատակաց ուխտավայրը որպէս քարտէլ իրականութիւն քանդել, սակայն կարելի չէ Տեր Զօրի խորհուրդը ու ոգին քանդել մեր ժողովուրդի կեանքէն ներս: Արդարեւ, Տեր Զօրը մեր հաւաքական ժողովուրդի յիշողութեան մէջ արմատացած է. ան հոմակիչ է Տեղասպանութեան, միաժամանակ՝ յարութեան. մահուան, միաժամանակ՝ կեանքի: Հազարաւոր հայեր անցան Տեր Զօրէն, ոմանք ինկան Տեր Զօրի աւազներուն վրայ, ոմանք խեղդամահ եղան Եփրատ գետին մէջ. իսկ վերապորոները աշխարհի տարածքին շարունակեցին իրենց պահանջատիրական պայքարը՝ ի խնդիր մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու վերատիրացման:

Տեր Զօրը «Համազգային Ուխտատեղի» հռչակեցիք տարիներ առաջ, եւ արդարօրէն, անկախ կը մնայ իւրաքանչիւր հայու եւ ամբողջ հայութեան ազգային ուխտատեղին, մեր դատին, մեր հաւատքին, վճռակամութեան, պայքարին ու տեսլականին ներշնչարանը:

Այսօր, քարուքանդ վիճակի մէջ կը գտնուի մեր ժողովուրդին կողմէ շինուած այս ուխտատեղին, որովհետեւ Նոյն ցեղասպանն է անցած այս վայրէն եւ դարձեալ ցեղասպանութեան ենթարկուած մեր ժողովուրդի գաւաակներուն հաւատքին ու կամքին արտայայտութիւնը եղող այս կառոյցը: Սակայն, մենք չենք յուսահատած. մենք վճռած ենք վերաշինել Տեր Զօրի ուխտատեղին: Նայեցէք մեր ժողովուրդի պատմութեան. ուրիշներ քանդած են, մենք՝ վերաշինած. ուրիշներ յուսահատութիւն ցանած են մեր կեանքէն ներս, սակայն մենք յոյս ներշնչած ենք մեր ժողովուրդին. ուրիշներ մահով շրջապատած են մեզ, մենք կեանքին կառչած ենք:

Այսօր եկած ենք Տեր Զօր Պէյրութէն, Դամասկոսէն, Հալեպէն, Քեսապէն, Լաթաքիայէն, Գամիշլիէն եւ Սուրիոյ բոլոր շրջաններէն. Մեզի հետ եկած են հոգեւոր հայրեր, պետական երեսփոխաններ, Ազգային Իշխանութեան անդամներ, համայնքային պատասխանատուներ եւ մեր ժողովուրդի գաւաակները:

Եկած ենք յանուն մեր ժողովուրդին եւ իւրաքանչիւր հայու՝ մեր հաւատարմութեան ու յանձնառութեան ուխտը վերանորոգելու:

Եկած ենք Տեր Զօր մեր վճռակամութիւնը վերահաստատելու՝ թէ համազգային ճիգով մենք պիտի վերաշինենք Տեր Զօրը:

Եկած ենք Տեր Զօր մեր համազգային պայքարը շարունակելու, մեր կամքը ամրացնելու՝ ի խնդիր Տեղասպանութեան ճանաչման եւ մեր իրաւունքներու հատուցման:

Փառք ու պատիւ Տեր Զօրի գողգոթայէն անցած եւ յարութիւն առած մեր ժողովուրդին:

ԵՌԱԳՈՅՆԻՆ ԴԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ



Գրիգոր Տունկեան

Մայիսեան առաջին օրերուն հետ, գարթնած է Նայիրեան ոգին: Ազգային արժանապատուութեան ոտնահարումին դէմ, ցասումի խաղաղ ցոյցերով, ոտքի կանգնած է հայրենաբնակ ժողովուրդը: Անոր արդար պահանջին միացած են արտերկրի բոլոր հայ ոստանները, «Դիմադրութեան հետ Հայրենիքի համար» տրամաբանութեամբ եւ միասնականութեան կրթիչ օրինակով:

ՀՀ անկախութեան տօնի հերթական տարեշումին ընդառաջ, Մայիսեան յաղթբազմութեան պսակումը հանդիսացող անկախ պետականութեան խորհրդանիշը դարձած եռագոյն դրօշի գոյերթին առնչուած յիշարժան տուեալներ կ'ուզեմ բաժնեկցիլ յարգելի ընթերցողներուս հետ:

Հայկական Կիլիկիոյ, վերջին ինքնիշխան թագաւորութեան, եռագոյն դրօշը տարերային կերպով պահուած էր մեր հաւաքական յիշողութեան մէջ, որպէս Հայոց դրօշ: Այս իսկ պատճառով, Հայ ազգային ազատագրական գաղափարներու առաջին տարածիչներէն Շահամիր Շահամիրեան 1773-ին Մատրասի մէջ իր հրատարակած «Որոգայթ Փառազ»-ին մէջ նորուագծած է ապագայ անկախ պետականութիւնը եւ նկարագրած է անոր դրօշը՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն:

1918-ին, ՀՀ անկախութեան հռչակումէն մօտ 60 տարի առաջ, Միքայէլ Նալպանտեան «Մեր Հայրենիք»-ին մէջ ակնարկած է ապագայ դրօշին ըսելով. «Նայիր Նրան երեք գոյնով, նուիրական մեր նշան, թող փողփողի թշնամուն դէմ, թող միշտ պանծայ Հայաստան»:

Հայ ժողովուրդի անօրինակ միասնականութեամբ, 1918-ին Մայիսեան հերոսական ճակատամարտերէն ետք հռչակուած հայոց անկախ Հանրապետութեան դրօշը կը դառնար եռագոյնը:

Հայաստանի խորհրդայնացումէն ամիսներ ետք, 18 Փետրուար 1921-ին, Հայաստանի խորհրդային Իշխանութեան դէմ ծագած համաժողովրդային յաղթական ապստամբութեան դրօշն էր եռագոյնը, որուն բնօրինակը ապստամբութեան Նահատակ, դաշնակցական Տիգրան Ծամիւրի արեան հետքերով, այժմ կը գտնուի ՀՀԴ թանգարանի ցուցասրահը, Երեւան:

23 Օգոստոս 1990-ին, Խորհրդրային Հայաստանի Գերագոյն Խոր

հուրդը, կ'ընդունէր Հայաստանի անկախութեան մասին բանաձեւ «Հռչակագիր»-ը եւ սկիզբը կը դրուէր վերանկախութեան գործընթացին: Հայկական Սոցիալիստական Հանրապետութեան անունին կը փոխարինէր Հայաստանի Հանրապետութիւն անունը, Ղարաբաղը կը յայտարարուէր անբաժան մասը Հայաստանի, իսկ Հայաստանի իրապարակները լեցուցած ծովածաւալ բազմութիւնը արդէն կը ծածանէր



եռագոյն դրօշը:

Սովետական իշխանութեան կողմէ Հայաստանէն խլուելով եւ որպէս ինքնավար մարզ Ատրպեճանին բռնակցուած հայկական Արցախի արի ժողովուրդը 1991-ի Սեպտեմբերին կայացուցած համաժողովրդային հանրաքուէով կը հռչակէր իր անկախութիւնը: Անկախ Արցախի Հանրապետութեան պետական դրօշը կը դառնար եռագոյնը, յատուկ տարբերակով մը գատորշուած ՀՀ դրօշէն: Նահատակ ցեղի անմահներ, տորմիդ հրաթել, գէն ի ձեռին, հայրենի հողին վրայ կը կոթողէին եռագոյն դրօշը, միացնելով հողն ու ազգը:

Ամբողջ 70 տարի, Հայրենիքէն դուրս որպէս ազգային ինքնութեան խորհրդանիշ պահուած եռագոյնը վերադարձած էր հայրենիք:

Հայոց Նորագոյն պատմութեան բախտորոշ մէկ փուլին կերտուած Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշը ոչ միայն անկախ պետականութեան խորհրդանիշ է, այլեւ նուիրական սուրբնան է միացեալ Հայաստանի եւ պահանջատիր հայութեան, երկէ յորդաններուն դէմ թրջական, այսօր վարքագիծին դէմ յանձնողական:

Եռագոյնը հրաւիրակն է հայ ազգային միասնականութեան, յուշարարը հայրենիքի ամբողջական պահպանումին եւ տակաւին բռնազրաւուած տարածքները միացնելու անհրաժեշտութեան:

Եռագոյնը Ազատ Անկախ եւ Միացեալ Հայաստանի հանգանակը անեղծ պահող սերունդներու դարաւոր ներշնչարանն է:

ԱՐԱՄԱ ԿԱՅՐԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ
25 Մայիս 2022
Տեր Զօր, Սուրիա

www.kantsasar.com
www.kantsasar.com

ԱՆԿԵՂԾ ԸՆԿԵՐԸ



Գարոյին Զիւրքլեան

Բոլորս ալ մեր կեանքին մէջ ունինք ընկերներ, գորս մենք կ'ընտրենք: Առանց ընկերոջ մտերմութեան մեր կեանքը անիմաստ պիտի դառնար: Լաւ ընկերութիւնը ամենաթանկ արժէքն է մեր կեանքի, սակայն անկեղծ ընկերները քիչ են ցաւօք:

Ո՞վ է, սակայն, անկեղծ ընկերը մարդկային մեր յարաբերութիւններուն մէջ:

Ան է, որ միշտ կը լսէ քեզ եւ ճիշդ խորհուրդներ կու տայ: Երբ սխալներ գործես, զանոնք տեսնելով լուռ չի մնար, այլ կ'ուղղէ քեզ դէպի ճիշդ ճամբան: Չի բամբասեր եւ առիթ չի տար, որ ուրիշներ վատաբանեն քեզ: Չի նախանձիր յաջողութիւններուդ, այլ կ'ուրախանայ եւ կը քաջալերէ քեզ: Աչքերուդ նայելով կը հասկնայ, թէ ի՞նչ է տրամադրութիւնդ կամ ըսել ուզածդ: Չի ստեր, այլ տեսաբար ճշմարտութիւնը կը խօսի, նոյնիսկ եթէ իր խօսքը պիտի նեղացնէ քեզ: Կը նուիրէ քեզ սեր, յարգանք ու ժպիտ եւ ամեն դժուար պահու կը ջանայ կողքիդ ըլլալ: Կը փնտռէ քեզ յաճախ, դուն ալ գինք՝ տեսաբար:

Մեծ երջանկութիւն է ունենալ սրտակից եւ հարազատ ընկեր, որուն կը վստահիս ամեն բան եւ որուն հետ կը գրուցես ամեն ինչի մասին՝ գիտնալով, որ ան քեզ կը հասկնայ եւ չի դաւաճաներ, ունի բաց միտք ու անկեղծօրէն կ'արտայայտուի, առանց ծամծմելու բաներն ու մտքերը:



Եթէ մեր կեանքին մէջ ունինք այսպիսի անկեղծ ընկերներ, բախտաւոր ենք: Համամիտ չեմ այն խօսքին թէ. «Որքան ընկեր ունիս, այնքան մարդ ես»: Աւելի լաւ է ունենալ մէկ ընկեր, բայց անկեղծ ու հաւատարիմ, ինչպէս ժողովրդական առածը կ'ըսէ. «Ուրախութիւնը շատ ընկերներ ունի, իսկ տխրութիւնը՝ քիչ, բայց վստահելի»:

Անկեղծ ընկերները անբաժան են մեզմէ, բայց անկեղծ ընկեր ունենալու համար նախ դուն պիտի կարենաս անկեղծանալ: Անկեղծ ընկերը կը նմանցնեն առողջութեան, եթէ ուշադրութիւն չդարձնես ու չգուրգուրաս անոր վրայ, կը կորսնցնես զայն: Նման ընկերներու հագուադէպօրէն կը հանդիպինք մեր կեանքին ընթացքին: Անկեղծ ըլլալը ուժեղ ըլլալու արտայայտութիւն է վերջապէս: Ան որ չունի բարոյյններ, հանգիստ է ու ներքուստ խաղաղ, ան որ իր ծախողութիւնը չ'որոնէր ուրիշներու մէջ, այլ ինքն իր մէջ կը փնտռէ ու կը ջանայ սրբազրել զանոնք, ան որ կը ջանայ վայելել ընկերութեան հաճոյքը, ան է միայն որ կրնայ անկեղծութեան ներքին ուժը ունենալ:

Ուստի, եթէ ունիք անկեղծ եւ հաւատարիմ ընկերներ, տեր դարձէ՛ք անոնց, որովհետեւ անոնց հոգին գուլալ է, ինչպէս աղբիւրը: Այնպիսիները միշտ ձեր կողքին կը գտնուին՝ ուրախութեան թէ նեղութեան պահերուն:

Առաջնորդուի՞նք ուրեմն հայ ականաւոր բանաստեղծ Պարոյր Սեւակի հետեւեալ խօսքով. -

- Խմենք կենացն անդաւաճան ընկերութեան
- Ընկերների այն սերութեան,
- Որ մինչեւ իսկ չի ընդհատուում
- Աքսորի մէջ ու գերութեան:
- Ընկեր լինենք
- Նոյն յուզմունքի,
- Համոզմունքի՛,
- Նոյն ճաշակի՛,
- Դրօշակի՛,
- Ո՛չ թէ ընկեր լոկ բաժակի...:

Տեսակետ

«ՄԵ՛ՂՔ, ՈՐ ՆԱ՛Յ ԷՔ»



Նայիրի Աստուրեան-Ֆրանքեան

«Մե՛ղք, որ հա՛յ էք» ժողովրդային խօսքը յաճախ լսած էի տարեց կիներէ, որոնք կը յանդիմանէին փողոցը զիրար քաջքշելով հարուածող, իրենց բերանը պղծող հայ կատաղի տղաքը:

Դուք երբեւէ լսա՞ծ էք նման արտայայտութիւն մը օտարազգիներէ՞ ուղղուած իրենց ազգակիցներուն: Ես չեմ լսած:

Կը հաւատանք, որ բնորոշ չափանիշ մը կայ հայու նկարագիրին, այն ալ՝ շնորհքն է: Բարկանալը, ընդզգիլը մարդկային բաներ են, բայց վայրագութեան դիմելը եւ հայիոյելը՝ վայել չեն հայ քրիստոնէային, որուն կոչումն է՝ հայօրէն ապրիլ քրիստոնավայել կեանքով:



Մենք՝ հայերս, մանուկի մը ծննդեան առիթով անոր ծնողքին կ'ուղղենք սրտաբուխ մաղթանքներ ըսելով. «Թող շնորհալի զաւակ ըլլայ, պատիւ բերէ ազգին, հայրենիքին ու շրջապատին», կամ առօրեայ մեր կեանքին մէջ յաճախ կ'ըսենք. «Շնորհակալ եմ», շնորհքը ընկալած որպէս արտայայտութիւն:

Մեր նախնիները պատահամբ չեն արտասանած այս բառակապակցութիւնները, այլ՝ իմաստութեամբ ընտրած են զանոնք:

Վերջերս, հայրենիքի քաղաքական լարուած վիճակին բերումով՝ փողոցները, հրապարակները հոծ բազմութեամբ խմբուած իւրաքանչիւր խմբակցութիւն, իր ակնոցով, ինքզինք արդար սեպտելով կը բողբոքէ:

Աստուածաշունչը արդարութեան համար չբողբոքել մեղք կը համարէ. «Չկայ մէկը, որ արդարութեան համար բողբոքէ» (Ես 59.4ա): Ուրեմն միտումը ճիշդ է, բայց արտայայտութեան ձեւը՝ որքանո՞վ ընդունելի:

Յաւ ի սիրտ, այսօր հայրենի երկինքը ապականած է իր իսկ քաղաքացիներու պարսաւանքի խօսքերով, նուաստացուցիչ արտայայտութիւններով, հակառակութեամբ, աստելութեամբ եւ անեծքներով, որոնք միայն ազգիս կործանման կը նպաստեն: Քաղաքագիտութեան մարզին մէջ գիտելիքներս համեստ են, սակայն Յիսուս Զրիստոս այսպէս կ'ըսէ. «Ամեն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի եւ տուն մը իրեն դէմ բաժնուած՝ կը կործանի» (Ղկ 11. 17բ):

Գիտե՞ք Յակոբոս առաքեալ ի՞նչ ըսած է լեզուի մասին. «Անով կ'օրհնենք Աստուած ու Հայրը եւ անով կ'անիծենք մարդիկ, որոնք Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած են, միեւնոյն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անեծք, եղբայրներս, պէտք չէ որ այս այսպէս ըլլայ» (Յակոբոս 3.9-10):

ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը 2022-ը հռչակեց «Սփիւռքի տարի», ուստի փափաքս է, որ մենք՝ սփիւռքահայերս, մեր բարոյական ներդրումը ունենանք տազնապալի օրեր ապրող մեր ազգակիցներուն, զանոնք օրհնելով, որովհետեւ կը հաւատամ, որ խօսքը իշխանութիւն ունի եւ եթէ հաւատալով կրկնուի՝ կը կատարուի: Երանի միաբերան արտասանենք ու յաճախ կրկնենք. Ո՛վ հայրորդի, «Տերը օրհնէ քեզ եւ պահէ քեզ, Տերը պայծառացնէ իր երեսը քու վրադ ու ողորմի քեզի, Տերը իր երեսը քու վրադ վերցնէ եւ խաղաղութիւն տայ քեզի» (Թուոց 6.24-26):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



Ի յիշատակ՝
Տարօն Տուրութեան
Հայրենակցական Միութեան
հին ու նոր անդեցեալներուն

Հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 5 Յունիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Ն. Աղբալեան» սրահէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ
ՎԱՐԴԱՆ ՀԱՄՊՈՅԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 5 Յունիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Այս շաբաթ զգուշութիւն ցուցաբերեցէ՛ք ձեր ամենտրական գործերուն մէջ: Նոր ծրագիրները կրնան վտանգներ պարունակել:



ՑՈՒԼ

Ձեր բնակարանը կարգի բերէ՛ք եւ ամրան եղանակին համապատասխան գոյներով հարստացուցէ՛ք կահաւորումը:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Վերջապէս ձեր սպասած սիրոյ խոստովանութիւնը պիտի լսէք այս շաբաթ: Պատրաստ եղէ՛ք պատասխանելու:



ԽԵՑՁԵՏԻՆ

Ձեր շրջապատը բամբասկոտ մարդոց մով լեցուած է: Դեռու մնացէ՛ք նման անձերէ եւ ձեր նպատակներուն իրականացման համար լուռ աշխատեցէ՛ք:



ԱՌԻԾ

Ոմանք կը փորձեն ձեր յաջողութիւնները նսեմացնել: Ականջ մի՛ տաք բարդութեամբ անձերու ըսածներուն: Դուք ճիշդ ճամբու մէջ եք, անկախ էք ու աշխատասեր:



ԿՈՅՍ

Փորձեցէ՛ք ձեր աշխատանքի եւ միութենական գործի հաւասարակշռութիւնը պահել, որպէսզի յաջողակ դառնաք ձեր անհատական եւ ազգային կեանքին մէջ հաւասարապէս:



ԿՇԻՈՔ

Զրպարուրիչ էք ու բարի: Այս իսկ պատճառով միշտ փնտռուած էք ձեր ընկերային եւ աշխատանքային միջավայրին մէջ: Ձեր յարաբերութիւնները դրական զարգացում կ'ապրին նաեւ այս շրջանին:



ԿԱՐԻՃ

Զոգ տարէ՛ք ձեր առողջութեան, այլապէս ամենափոքր հարցերն անգամ կրնան բարդ կացութիւններու մէջ դնել ձեզ ժամանակի ընթացքին:



ԱՂԵՂԱՊՈՐ

Արտաքին տեսքը, մաքրութիւնն ու կոկիկ աշխատանքը կարելոր են լաւ տպավորութիւն ձգելու ձեր աշխատանքին մէջ:



ԱՅՏԵՂԶԻՐ

Ձեր ժամադրութիւնները յարգեցէ՛ք ու ձեր ընկերները դասաւորելու համար կազմակերպուած աշխատեցէ՛ք: Ծուլութիւնը կրնայ ամլութեան մատնել ձեզ:



ՋՐՈՍ

Նոր ծանօթութիւնները աշխատանքի նոր միտքեր պիտի խթանեն: Աշխատեցէ՛ք օգտուիլ նախաձեռնող անհատներէ եւ արդիական ու լայն մտածելակերպ ունեցողներէ:



ՁՈՒԿ

Այլոց հարցերով մի՛ գբաղիք: Ո՛չ բամբասանքը, ո՛չ ալ ուրիշներու ձախողութիւնը ձեր յաջողութեան կրնան նպաստել: Դուք ձեր խօսքերուն եւ գործերուն հայելին էք:



ԻՆՉ Է ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԺԱՀՐԸ

Առողջապահութեան Զամաշխարհային Կազմակերպութիւնը (ԱԶԿ) յայտնած է, որ 13-21 Մայիսին աշխարհին մէջ յայտնաբերուած է Կապիկի ծաղիկի ժահիրով վարակուած 92 պարագայ:



Առայժմ այս վարակով մահացողներ չեն արձանագրուած: Դեպքեր արձանագրուած են 12 երկիրներու մէջ: Վարակակիրներու ամենամեծ թիւը արձանագրուած է Փորթուկալի, Սպանիոյ եւ Մեծն Բրիտանիոյ մէջ: Վարակուածներ յայտնաբերուած են նաեւ Աւստրալիոյ, Պելճիքայի, Քանադայի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Ղազախստանի, Շուէտի եւ ԱՄՆ-ի մէջ:

Կապիկի ծաղիկը կենդանիներէն մարդոց փոխանցուող, հազուադեպօրէն յայտնուող ժահիրային հիւանդութիւն է, որ առաւելաբար ծնունդ առած է Կեդրոնական եւ Արեւմտեան Աֆրիկէի շրջաններուն մէջ:

Ժահիրը մարդուն կը փոխանցուի վայրի կենդանիներէն: Կապիկի ծաղիկի ժահիրը (Orthopoxvirus) կը նմանի բնական ծաղիկի ժահիրին՝ չրծաղիկին:

ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐ ՏԱՆՏԻԿՆՈՉ

Ամեն տանտիկին խոհանոցի իրերուն մէջ հաւանաբար ունենայ տապակ մը, որ յաճախ կը գործածէ, որովհետեւ (ըստ իրեն) տապակուած գետնախնձորն ու այլ բաները աւելի համեղ կը դառնան:

Այսպիսի տապակի յատակը (կրակին ենթակայ մասը) յաճախակի գործածումէն կ'աղտոտի, կը սեւնայ ու մաքրելը այնքան ալ դիւրին չ'ըլլար: Բայց եթէ փորձենք յատակը պատել աղի հաստ շերտերով եւ ձգել 20 վայրկեան, ապա շերտուած հում գետնախնձորով մաքրենք զայն, կը ստանանք փայլուն տապակ մը, որուն մետաղը չէ վնասուած ճեղքերով:



Աղը կը ծառայէ իբրեւ աղտը քայքայող սիւթ, իսկ գետնախնձորը կը փափուկցնէ եւ հեշտութեամբ կը մաքրէ մուրը:

ԽՈՐՅՈՒՐ ԳԵՏՆԱԽՆՁՈՐՈՎ ԽՄՈՐԵՂԵՆ



Բաղադրութիւն
 500 կրամ շերտաւոր խմոր
 1/2 քիլօ գետնախնձոր
 200 կրամ խոզապուխտ (կամ որեւէ տեսակի միս)
 200 կրամ մոզարելլա պանիր
 1 հաւկիթ
 1/2 տրոցակ ազատքեղ պտղունց մը աղ

Պատրաստութիւն
 Գետնախնձորը (խաշուած) ճգմել, աւելցնել աղը, խորանարդածէ մանրուած խոզապուխտը, մանրուած ազատքեղը, տաշուած պանիրը եւ լաւ խառնել: Այս միջուկը գունդերու վերածել: Խմորը բանալ եւ պզտիկ քառակուսիներու բաժնել: Իւրաքանչիւրին մէջ գունդ մը ձգեցնել, ապա խմորին անկիւնները միացնել:

Փուռի ափսէին յատակը քիչ մը ձեթ քսել եւ պատրաստուած գունդերը տեղադրել անոր մէջ: Իւրաքանչիւր գունդի երեսը դանակով խաչածել ճեղքել եւ քիչ մը պանիր աւելցնել: Վրան հաւկիթ քսել ու տաք փուռին մէջ եփել 180 ջերմաստիճան տաքութեամբ, մինչեւ որ լաւ կարմրի եւ ծաղիկի նման բացուի:

Բարի ախորժակ

Բանաստեղծին անկիւնը

ԻԶԷՔ ԵՐԱԶՆԵՐ



Լեւոն Շանթ «Զին Աստուածներ»

Իջէք, իջէք երազներ,
 Իջէք զգոյշ երազներ,
 Շոյող անուշ երազներ,
 Իջէք քնքոյշ երազներ,
 Ծաղիկ, կանաչ, թարմ յոյսեր
 Բախտի կարկաչ ու յոյսեր,
 Դող ու անցուկ ու կարօտ,
 Ծածուկ արցունք վարանոտ,
 Խեղքի, մտքի հակասում,
 Միշտ նոր կեանքի սպասում...

Իջէք, իջէք երազներ,
 Իջէք զգոյշ երազներ,
 Շոյող անուշ երազներ,
 Իջէք քնքոյշ երազներ,
 Գգուանք, ժպիտ, գոյն ու բոյր,
 Աչեր վճիտ ու համբոյր,
 Իղձեր անվերջ, անմեկին,
 Տազնապ ու տենչ մոլեգին,
 Օրօր, գրգիռ ու յոյզեր,
 Սրտի թրթիռ, երգ ու սեր...

Իջէք, իջէք երազներ,
 Իջէք զգոյշ երազներ,
 Շոյող անուշ երազներ,
 Իջէք քնքոյշ երազներ,
 Աստղեր թովիչ, բոց ու կայծ,
 Տնորներ վառ ու առկայծ,
 Զաւատ ուժի, մեծութեան,
 Փառքի, կամքի գոյութեան,
 Շոյիւղ, թնդին, հպարտանք,
 Իմաստութիւն... բիւր պատրանք:

Իջէք, իջէք երազներ,
 Իջէք զգոյշ երազներ,
 Շոյող անուշ երազներ,
 Իջէք քնքոյշ երազներ:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ պասքեթի աւարտական քառեակի մրցումներուն, Դամասկոսի մէջ Ուսիտե եւ Քարամէ խումբերը հանդիպեցան երկու անգամ:

Առաջինին Ուսիտեն կրցաւ յաղթել 82-75 արդիւնքով, իսկ երկրորդը հանդիպումը աւարտեցաւ ի նպաստ Քարամէին 89-74 արդիւնքով: Հալէպի Համատանիէի մարզահամալիրին մէջ Իթթիհատը յաջողեցաւ 83-67 արդիւնքով պարտութեան մատնել Ճալաարը:



-Ասիոյ ֆուլթայլի ախոյեանական մրցումներուն Սուրիոյ ներկայացուցիչ Ճալալէն 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Լիբանանի ալ-Անսարին, իսկ Թշրինը 2-0 արդիւնքով զիջեցաւ Պահրէյնի Մուհարրաքին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՆՈՎ ՄԱՆՉԵՍԹԸՐ ՍԻԹԻՆ ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Կիրակի երեկոյեան Մանչեսթըր Սիթին յաջողեցաւ իր պատմութեան մէջ 8-րդ անգամ ըլլալով տիրանալ Անգլիոյ ախոյեանութեան:



Ալ-Իթթիհատ մարզադաշտին վրայ Սիթին հիւրընկալեց Ասթըն Վիլան: 37-րդ վայրկեանին Մանի Քաշի միջոցաւ Ասթըն Վիլա նշանակեց առաջին կոլը: 69-րդ վայրկեանին Ֆիլիպ Զոթիլիոն կրկնապատկեց արդիւնքը: 76-րդ վայրկեանէն ետք, հանդիպումին ընթացքը ենթարկուեցաւ փոփոխութեան. 76-78-81-րդ վայրկեաններուն Ռոտրիկո եւ Իլքայ Կիւնստողան նշանակեցին Սիթիի յաղթանակի կոլերը, որոնք շնորհիւ կազմը ձեռք ձգեց Անգլիոյ ախոյեանութեան տիտղոսը:

ԷՍՓՈՓԷՆ ՄՆԱՑ ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆԻ ՀԵՏ

Աշխարհի ախոյեան, Ֆրանսայի հաւաքականի 23-տարեկան յարձակող Զիլիան Էմփափեն Նոր պայմանագրութիւն ստորագրեց Ֆրանսայի ախոյեան Սան Ժերմանի հետ, որուն հետ պիտի մնայ մինչեւ 2025 տարեշրջանի աւարտը:



Երկար բանակցութիւններէ ետք, Սան Ժերմանի ղեկավարները կրցան համոզել Էմփափեն մնալ փարիզեան խումբին հետ: Ան իր կարգին Սպանիոյ Ռեալ Մատրիտի նախագահի Ֆլորենթինո Փերեզը տեղեկացուց, որ ան ընդունած է Սան Ժերմանի առաջարկը: Աւելի ուշ Eurosport-ը յայտնեց, որ Էմփափեն պիտի ստանայ տարեկան 100 միլիոն եւրո, իսկ Փարիզ Սան Ժերմանին հետ մնալուն համար՝ 300 միլիոն եւրո նուէր: Ակումբը Էմփափեն առաջարկած է նաեւ դառնալ ակումբի համասեփականատեր եւ ձայնի իրաւունք ունենալ խումբի գլխաւոր մարզիչի փոփոխութեան եւ ակումբի խաղացողները որոշելու քաղաքականութեան մէջ: Վերջին տարին Էմփափեն խումբին հետ մնա կազմած է 45 հանդիպումներու, նշանակելով 36 կոլ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 391)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան



Հորիզոնական

1. Օնիկ Դերձակեանի ծածկանունը:
2. Հակառակ լեռ: Պիղծ:
3. Գիրք: Հակառակ մէկը:
4. Տարի: 7001:
5. Հակառակ յոգնակերտ մասնիկ: Սոսկ: Եղնիկ:
6. Հակառակ 79: Ամուսնացած կին:
7. Երկինչին: Սրբուհի մը: Թունաւոր օձ մը:
8. Ուռնակ: Ցաւի ճիչ:
9. Ձեռք բաց:
10. Ձայնանիշ: Անստոյգ: Նաւավարութեան Գործիք:
11. Արժէք: Հակառակ 7001: Դաշտային քաղաք Կիլիկիոյ մէջ:
12. Խորխորատ: Սերունդ: Յարմար:

Ուղղահայեաց

1. Անկարելի: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Մերը լալով, պարտը»:
2. Կատաղի: Զաց:
3. Առատ: Հայ գուսան: Սարսափ:
4. Ձայնանիշ: Խորհրդանշային պատկեր:
5. Անտարբեր:
6. Միաբանական: 4600:
7. Իրերայաջորդ տառեր: Տառի մը դրացիները: Թատերական գործողութեան բաժանում:
8. Զրիստոսի յարութեան 40-րդ օրը յիշատակուած տօն:
9. 203: Հակառակ երկինչին: Հինգշաբթի:
10. Հայկական մականուններու վերջավանկը: Ցուցական դերանուն:
11. Ծառի բունին ստորին մասը: Հարաւային Ամերիկայի մէջ գտնուող երկիր:
12. Շող, փայլք: Բայց:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 390)



ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 30/5 21° 38°	Երեքշաբթի 31/5 20° 37°	Չորեքշաբթի 1/6 21° 37°	Հինգշաբթի 2/6 24° 39°	Ուրբաթ 3/6 22° 40°	Շաբաթ 4/6 20° 38°	Կիրակի 5/6 20° 37°
---	--	--	---	--	---	--

ՀԱՄԱԳԱՅԻՆ «ԱՆՈՒՂԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ - 2»-Ը ՄԵԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՉՏԱԻ

Համագայինի աշուղական երեկոները վերջին տարիներու ամանդությունը դարձան՝ իրենց վայելած ընդունելության շնորհիվ: Այդ երեկոներուն ընդմեջէն մեր հայ աշուղներուն սիրուած երգերը կը հընչեն, հայ երգին ու երաժշտութեան հմայքը կը ջերմացնէ սրտերը, կը վե-

ղեկավարն ու բոլոր կտորներու երաժշտական գործիքաւորման հեղինակը բժիշկ Ռաֆֆի Ապեճեանն էր: Ան փոքր տարիքէն նուիրուած է

ճիթեր մտած ու ամսահացած են:
Արաբերէն բացման խօսքով հանդիսավար Զրիստ Փայասեան



ըսաւ, որ Սուրիական Հայրենիքէն ներս տեսարար առիթ ընծայուած է հայութեան պահելու հայ երգն ու մշակոյթը:

Երեկոն համախմբաբաժնէր երգի ու երաժշտութեան մարզերուն մէջ սիրողական, սակայն փորձառու կատարողներ ու մեներգողներ, որոնք գնահատելի որակ մը հրամցուցին հանդիսատեսին: Հետաքրքրական երեւոյթ էր նաեւ այն, որ երգողներու եւ նուագողներու մեծամասնութիւնը կը բաղկանար երիտասարդներէ, որոնք Հալէպի բժշկական, երկրաչափական, փաս-

չեցին. գուսան Աշոտի «Անճիկար»-ը, մեներգող՝ Մեթր Խաչիկ Աշճեան, «Սարի Սիրուն Եար»-ը մեներգող՝ Լիւսի Յովհաննեսեան-Այվազեան, «Օճախում»-ը՝ Կասիա Պաղտիկեան, իսկ «Սարերի Եղնիկ»-ը՝ Ակաբէ Ֆրանքեան:

Հանդիսավարները մերթ ընդ մերթ տեղեկութիւններ ներկայացուցին յայտագիրի երաժշտական կտորներուն, գուսաններուն ու աշուղներուն մասին: Անոնք դիտել տուին, որ նախապէս հայ աշուղները կը կոչուէին գուսաններ. անոնց մասին ամենահին տեղեկութիւնը 5-րդ դարէն էր, իսկ անոնց արուեստը՝ գերագանցապէս հայկական էր: Երբ Հայաստան պետականութիւնը կորսնցուց ու ինկաւ պարսկական,



արաբական եւ օսմանեան լուծին տակ, հայ գուսաններու արուեստը կրեց այդ երկիրներու աշուղներու



րապրեցնէ ապրումներ ու յիշատակներ, եւ հայկական մեղեդին նոր ճոճով ու նոր ձայներով կը հնչէ:

երգի եւ երաժշտութեան ու միջնէն օրս, իր բժշկական մասնագիտութեան կողքին, կը շարունակէ այս



Արդարեւ, Շաբաթ, 21 եւ Կիրակի, 22 Մայիս 2022-ին, հալէպահայ հանդիսատեսին հրամցուեցաւ Համագայինի «Ն. Աղբալեան» Մաս-



մարզին մէջ եւս նորութիւններ մուծել:

2020-ին Ապեճեան ղեկավարեց Համագայինի «Աշուղական երեկոյ-



նաճիւղի երաժշտական Յանձնախումբին կազմակերպած «Աշուղական երեկոյ-2»-ը:

1»-ը, իսկ 2021-ին Համագայինի Եսդրատային նուագախումբը:

Երեկոյին բացման խօսքով հանդիսավար Ռաբէլ Շահինեան ըսաւ. «Հայ ժողովուրդը ունի հարուստ մշակոյթ, որուն շնորհիւ եւս երկար տարիներ օտարութեան մէջ



Ձեռնարկը նուիրուած էր հայ հանրաձանօթ գուսաններու եւ աշուղներու՝ աշուղ Ջիւանիի, գուսան Աշոտի եւ գուսան Հաւասիի: Խումբին գեղարուեստական



ան իր գոյութիւնը պահպանած է: Հայ ժողովրդական երգը ծնած է, երբ հայ գեղջուկը հողը օրհնած է, բերքը գովերգած է: Աշուղական երգերն ալ ծնած են աշուղներուն շքրթներէն՝ պալատներ, դաշտեր ու խոր-



տաբանական եւ այլ համալսարաններու ուսանողներ էին ու միեւնոյն ատեն նուիրուած էին հայ երգին ու երաժշտութեան:

Յայտագիրի առաջին բաժինով ներկայացուեցան հետեւեալ երգերը. «Սասնայ Շորոր»- աշուղ Ջիւանի, «Էլ Ում Երգեմ»- գուսան Հաւասի, մեներգող՝ Բիւզանդ Պեպեճեան, «Սիւնեաց Սարեր»-գուսան Աշոտ, մեներգող՝ Ժաք Պօզեազալեան, «Ջաւախքի Սիրուն Աղջիկ»- գուսան Հաւասի, մեներգող՝ Մեղեդի Բամպուքեան, «Չանգեղուրի Չոլերը»-գուսան Աշոտ, մեներգող՝ Բժ. Պերճ Գասապեան, «Ընծայ Խնձոր»-գուսան Հաւասի, մեներգող՝ Նայիրի Պարսումեան, նոյն գուսանէն՝ «Խօսիր Իմ Սագը», մեներգող՝ Մարիա Զիչեան-Պայրամեան, «Գոլխոզի Ջոպան»-ը, մեներգող Կարօ Գուշաքեան:



ներ («աշըղ» արաբերէն կը նշանակէ սիրահար):

Գուսաններուն պէս, աշուղներն ալ երգի կատարման հետ կը նուագէին որեւէ ժողովրդային նուագարան՝ սագ, քամանչա, թառ, նոյնիսկ ջութակ, որ քամանչայի պէս կը գետեղէին իրենց ձախ ծունկին վրայ: Աշուղներու երգերը բազմաբովանդակ էին՝ սիրային, բարոյախօսական, հերոսային, երգիծական, կատակային եւ այլն:

Այնուհետեւ յայտագիրը շարունակեց **Էլենա Աւագեան** Շաբ.՝ 19 7